600.0045.27.09.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2001 թվականի սեպտեմբերի 27-ի №45
ք.Երևան

«Երէներգո» փակ բաժնետիրական ընկերության «Արենի» և «Ազատեկ» փոքր ՀԷԿ-երից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի սահմանման մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ հոդվածը և 22-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Երէներգո» ՓԲԸ-ի «Արենի» և «Ազատեկ» փոքր ՀԷԿ-երից առաքվող էլեկտրաէներգիայի միասնական սակագինը տարանջատել և սահմանել.

   ա) «Արենի» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 11.185 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 9.321 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:

   բ) «Ազատեկ» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 18.731 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 15.609 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի փետրվարի 25-ի №3 որոշման 1-ին կետը՝ «Երէներգո» ՓԲԸ-ի «Արենի», «Ազատեկ» փոքր ՀԷԿ-երից առաքվող էլեկտրաէներգիայի համար սահմանված սակագնի մասով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի նոյեմբերի 1-ից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ ***Վ. Մովսեսյան***